



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՆՈՒՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԿԼ. ԼՈՒԿԱՇԵՒԻՉ

# ՈՐԲ ԱՆՆԱՆ

Թարգմ. ռուսերենից

Թ յ Յ Լ Ի Չ

Տպարան «ՀԵՐԱԿՍ» Ընկ. Մարտ. փող. 15.

1904

(74)

10 NOV 2011

91-718  
→ 90  
887-3

Այ

Լ-83

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԿԼ. ԼՈՒԿԱՇԵՒԻԶ

# ՈՐԲ ԱՆՆԱՆ

Թարգմ. ուսսերեկից

7213



ԹԻՖԼԻԶ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մաղաթ. փող., 15.

1904

(74)

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. ԼՈՒՐՄԱՆԻ

Մ Մ Մ Մ Գ Գ Գ

ԲՐԱՆՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Доз. ценз. Тифлисть, 26-го Ноября 1904 года



**Ա.**

Աշնան վերջին մուսյլ, ցուրտ օրերից մինն էր: Քամին փչում էր սաստկութեամբ և ծառերից պոկոտում արդէն դեղնած տերեւները և փոշու սիւներ էր բարձրացնում...

Ֆիւղի ճամբով մեն-մենակ մի աղջիկ էր գնում կապոցն ուսին. գնում էր նա դանդաղ քայլերով, տխուր ու տրտում, գլուխը բաշ գցած:

Ճամբորդը սարն ելաւ ու կանգ առաւ: Նա ձեռի կապոցը վայր դրեց խոտերի վրայ, իսկ ինքը երեսը դարձրեց դէպի այն կողմը, որտեղից, սարի ստորոտում, հեռուն, երևում էր գիւղը, գիւղական եկեղեցին փայլուն խաչով և համեստ գերեզմանատունը: Սրտասուքի խոշոր կաթիլները սկսեցին թափուել ազգկայ աչքերից:

Նա մօտ տասնուվեց տարեկան էր, գիւղական նախշուն շորերով, կարմիր թաշկինակը գլխին. աղջկայ լիք-լիք, կարմիր, դուրեկան դէմքը մի ինչ-որ տխրութիւն էր արտայայտում:

—Մնաս բարով, սիրելի մայրիկ, խօսեց նա հեկեկալով. մնաս բարով, մեր պահապան հայրիկ. նայեցէք, սիրեցեալ հարազատներ այն աշխարհից ձեր զաւակի վրայ. օրհնեցէք ձեր որբի ճանապարհը: Ո՛հ, ծանր է ինձ համար ձեզ թողնելը: Մնաք բարով, սիրելի ընկերուհիներս. մնաս բարով, հայրենի երկիր...

Եւ աղջիկը երեսի վրայ ընկաւ գետնին ու սկսեց համբուրել հայրենի հողը:

Քամին փչում էր և հետզհետէ աւելի ու աւելի կատաղում: Ճամբորդը նորից շարունակեց իւր ուղին: Նրա աչքից ծածկուեցին և գիւղը, և գերեզմանատունը, և սարը:

Մի նեղ շաւիղ տանում էր գէպի անտառ:

Ահա լսուեց խոտով բարձած սայլի ճռճրռոցը: Ծերունի սայլորդը նստած էր խոտի վրայ. Ճամբորդը գլուխ տուեց ծերունուն:

—Աննա, այդ դ՞ն էս. ո՞ր էս գնում, աղջիկս:

—Գնում եմ Թիֆլիս, քեռի: Երեւ լսած կըլինես, թէ ինչպիսի կեանք էի վարում եղբօրս տանը, ինչ օրեր էի քաշում հարսիս ձեռքին: Չատ համբերեցի. բայց այլ ևս անկարող եմ:

Սիրտս ցաւում է երեխաների համար, մեծ երախտիք ունեմ նրանց վրայ... և նա սկսեց դառնազին լալ:

—Սիրուն աչքերդ մի փչացնիր, աղջիկս, կրտեսնես նաև ուրախ օրեր, քեզ լաւ պահիր: Մի մոռանար ծնողներիդ վերջին խօսքերը:

—Մի՞թէ կարող եմ նրանց խօսքերը մոռանալ, քեռի:

—Ներկայումս, Աննա, քո ծնողները, կարող եմ ասել, հազուադիւտ մարդիկ էին:

—Ծնողներիս կենդանութեան ժամանակ ես միայն սէր ու փաղաքշանք էի վայելում, իսկ հիմա տեսայ վիշտ ու արտասուք: Ո՛հ, ծանր է, քեռի, ինձ պէս որբի օրը: Սիրտս հալ ու մաշ է լինում:

—Մի տխրիր, զաւակս, Աստուած ողորմած է. աշխարհումս կան և բարի մարդիկ, կըզթան, կօգնեն քեզ:

—Ծնորհակալ եմ, քեռի, սրտագին խօսքիդ համար. կարծես սիրտս թեթևացաւ:

—Ես սրտանց ցաւում եմ քեզ համար, զաւակս:

—Բայց վախենում եմ, քեռի, չգիտեմ թէ ինչպէս պէտք է խօսեմ այնտեղ խանումի հետ:

—Մի խորշիր նրանցից, աղջիկս. խօսիր քաղցր, համեստ և յոյս ունեցիր որ յաջողու-

Թիւն կունենաս: Բայց մենակ ինչպէս պէտք է  
գնաս, Աննա:

— Երկաթուղու գծերի ուղղութեամբ կեր-  
թամ. կարելի է նաև մեր գիւղացիներին պա-  
տահեմ, կրհարցնեմ նրանց: Ասում են մի երկու  
օրից կըհասնեմ Թիֆլիս:

— Տէր ընդքեզ, սիրելիս, բարի ճանապարհ:

— Գիւղում ամենքին բարեկիր, բեռի, ա-  
մենքին:

Աննայի ձայնը զողաց, արտասուքը նրան  
խեղղում էր:

Ծերունին շարժեց սանձը, ձին տեղից շար-  
ժուեց, նորից լսուեց սայլի ճռճոցը:

Աննան երկար ժամանակ մնաց անշարժ  
կանգնած, մինչև որ ծերունին աչքիցն անյայ-  
տացաւ:



Բ.

Փոքրիկ հիւրասենեակում վառած լամպարը  
իւր ախորժելի լոյսը սփռել էր սենեակում եղած  
կարմիր մետաքսէ կարասիքի, վարագոյրների,  
պատերից կախած ոսկեգօծ շրջանակներով պատ-  
կերների և պատուհանների մէջ դարսած ծաղիկ-  
ների վրայ: Գահաւորակի վրայ °Թաւշեայ սրփ-  
ռոցով կլոր սեղանի մօտ նստած էր մի տիկին  
և վիճակ էր բաց անում:

Դա մի գէր տիկին էր, կարմիր ու սպի-  
տակախառն դէմքով. մատներին բազմաթիւ մա-  
տանիներ, թեկն ապարանջաններ, ականջին ոս-  
կէ մեծ օղեր:

Յանկարծ թռչկոտելով ներս վազեց սենեակ  
տասներկու տարեկան մի շատ գէր ու կարմրա-  
թուշ տղայ, որ սաստիկ նման էր այնտեղ նըս-  
տող տիկնոջը:

—Մայրիկ, մի նոր խոհարարուհի է եկել վարձուելու, ասաց տղան:

—Է՛հ, գլուխս տարան, բոլորը միասին մի գրոշ չարժեն:

—Կարճ քթով ջահիլ աղջիկ է, մայրիկ, որ տեսնես ծիծաղդ կըգայ. կարմիր շոր ունի հագին, գլխին էլ կարմիր թաշկինակ, մի խօսքով կատարեալ գեղջկուհի, վրայ տուեց տղան ծիծաղելով:

—Գնա՛ կանչիր, Պետրոս, և նայիր, որ անցնելիս բան չգողանայ:

Աննան ներս եկաւ կոպիտ ու երկշոտ քայլուածքով. նա թէև գիւղական ձևով, բայց մարդ էր հագնուած. նրա լայն հիւսած շէկ ծամը գօտկից էլ ներքև էր իջնում, որի ծայրը կապած էր վարդագոյն ժապաւէնով: Աղջիկը շփոթմունքից ձեռքում տրորում էր գոգնոցը և երկիւղով դէս ու դէն նայում:

—Բանք ձեզ:

—Դու ռոտեղից ես գալիս, լուրջ գիրք ընդունելով հարցրեց տիկինը:

—Գիւղից, ուղղակի գիւղից եմ գալիս, սիրելիս, գլուխ տալով պատասխանեց աղջիկը:

—Բանից, գործից հասկան՞ում ես:

—Սմեն բան գիտեմ, սիրելիս:

Տղան, որ կանգնած էր պատուհանի մօտ, յանկարծ փրթկաց:

Աննան զարմացած յետ նայեց:

—Այս ք՞ո տղան է, հարցրեց նա ցոյց տալով Պետրոսին:

—Այո՛, իմ տղան է: Ուրեմն դու եփել ևս գիտես, լուանալ, հարթուկել, հա՛. հեգնօրէն հարցրեց տիկինը:

—Կարելի է թէ չփչացնեմ, և ինչ որ ցոյց կըտաս, այն էլ կարող եմ սովորել:

—Իմ կարծիքով դու ոչինչ չես իմանում: Դուք գեղջկուհիներդ առհասարակ շատ էք երեւակայում. հէնց մի փոքր բան սովորէք թէ չէ, իսկոյն որեւէ յիմարութիւն կանէք ձեր տիրոջը...

—Ի՛նչ ես հրամայում, սիրելիս, այդ կողմից բոլորովին միամիտ կաց:

—Անունդ ի՛նչ է:

—Աննա:

—Դէ՛հ, լսիր, Աննա. ինձ հարկաւոր է լաւ գործ շինող և ազնիւ աղախին. ես մտադիր չեմ ծառաներիս ձրի կերակրել: Դու ամեն բան պիտի շինես՝ եփես-թափես, լուացք անես, հարթուկես, յատակները մաքրես, Պետրոսին դպրոց տանես. իսկ այս բոլորի փոխարէն դու կըստանաս ամիսը երկու ըուրլի և կերակուր: Վաղը կարող ես տեղափոխուել:

—Ես ուրախութեամբ կաշխատեմ, սիրելիս, ուրախութեամբ:

—Նախ՝ դու պիտի խօսել սովորես. ինչ հետ դու-ով չպիտի խօսես: Ես ոչ թէ քո սիրելիդ եմ, այլ խանութդ. իսկ Պետրոսը պարոն է. հասկանո՞ւմ ես:

—Ինչպէս չէ, հասկանում եմ. ինչպէս կամենաս, այնպէս կը խօսեմ:

—Լաւ, գնա՛, վաղը կը գաս:

—Ինչ անտաշ գեղջկուհի է, ասաց Պետրոսը Աննայի գնալուց յետոյ և ուրախ-ուրախ սկսեց հորթի նման թռչկոտել:

Աննան միւս օրը տեղափոխուեց: Կանաչ անտառներից, դաշտերից, գիւղական ազատ ու մաքուր օդից յետոյ շատ զգալի էր նրա համար ապրել կիսամութ, փոքրիկ խոհանոցում, տաքութեան և ածխահոտի մէջ:

Նրա տիկինը, որ մի վաճառականի կին էր, սաստիկ գիւրազրգիռ ու կռուարար էր. իսկ ամուսինը բացի իւր խանութից ոչնչով չէր հետաքրքրուում: Նա տուն էր գալիս միայն հարած ժամանակ և միշտ էլ աղմուկ բարձրացնում: Պետրոսը երես առած երեխայ էր. ստեր հնարելով ազատուում էր ուսումից, ամբողջ օրերով ոչինչ չէր անում, թաւալում թախտերի ու

զահաւորակների վրայ և մանաւանդ շատ էր սիրում քաղցրեղէն:

Տիկինը շարունակ գոռում էր նոր խոհարարուհու վրայ. մի բան չէր ցոյց տալիս օրինաւոր կերպով, որ նա կարողանար հասկանալ, սովորել. և չնայելով դրան՝ յետոյ էլի ինքն էր սկսում պահանջել, յանդիմանել, բարկանալ խեղճ աղջկայ վրայ:

—Այդ ինչպէս ես սրբում կօշիկները, Աննա. քեզ ասում եմ այդպէս չի կարելի:

Աննան չգիտէր ուրիշ կերպ սրբել:

—Այդ ինչ ես անում, անմիտ. մէկ տես թէ ինչ ես անում. բաժակներ լուանալու ամանի մէջ դու սօուս ես լցնում: Ո՛հ, մեծ համբերութիւն է հարկաւոր քեզ հետ եօլա-գնալու համար:

Խեղճ Աննան ինչ գործի որ սովոր չէր, չէր կարողանում շինել, շատ անգամ փշացնում կամ կոտրում էր:

Տիկինը բարկութիւնից չգիտէր ինչ անել, խեղճ աղջկայ վրան էր ընկնում և ծամից բռնած բաշ տալիս:

—Յիմար աղջիկ, դու ինքդ չարժես դրան, ինչ որ կոտրեցիր. ես քեզ դուրս կանեմ:

Աննան իւր խանութից այնպէս էր վախենում, ինչպէս կըսակից. նրա ոտի ձայնը որ լսուում էր, ամբողջ մարմնով սկսում էր դողալ:

— Պետրոսը ծածուկ հետևում էր խոհարարուհուն և գալիս էր մօրը գանգատում:

— Մայրիկ, Աննան դարձեալ ինչ-որ բան էր ուտում, կարծեմ կաթսայից հանեց:

Մայրն իսկոյն ներս էր ընկնում խոհանոց:

— Աննա, երևի դու կարծում ես թէ հիւրանոց ես մտել, բերանդ շարունակ լիքն է. ինչպէս համարձակուեցիր կաթսայից բան հանել ուտել: Դուք միայն ուզում էք վնասել ձեր տէրերին:

— Խանում, մի կտոր հաց վերցրի, ահա նայեցէք, աղ արի, այն է որ ուտում եմ:

— Ինչքան հաց պիտի լինի, որ քեզ բաւականանայ. իսկի պահելու բան չես,

Աննան լուռ էր. նա հեշտութեամբ չէր տանում այս ամենը: Նա քնում էր խոհանոցի մի անկիւնում թաղիքի վրայ և մտաբերելով գիւղը՝ շատ անգամ արտասուում էր. իւր անցեալ կեանքը հիմա տասնապատիկ լաւ էր թւում նրան:

Մի անգամ Պետրոսը կանչեց Աննային մի առանձին դիրք բռնելով:

— Ե՛կ, եկ էլի, մի եկ տեսնենք, սպառնալով ասում էր նա. իսկ երբ Աննան ուզում էր անցնել նախասենեակով, ետեից կանչեց՝ «գո՛ղ»:

Աննան ցնցուեց, կարծես մէկը նրան մըտրակեց:

— Այս ինչ է նշանակում:

— Պետրոս, բոլոր դռները փակիր, հրամայեց մայրը, երբ նրանք ներս մտան սենեակը:

Աննան, յայտնի չէ ինչու, սարսափ զգաց:

— Լսիր, Աննա, մենք այստեղ մենակ ենք...

ես երէկ կորցրի հինգ ըուրլի, կամոզի վրայ էի գրել: Արդեօք դու չես տեսել:

— Ո՞րտեղ կարող էր կորչել. երևի մի տեղ պահած կըլինէք, խանում. որոնեցէք, կըզտնուի. կամաց խօսեց Աննան և ինքն էլ սկսեց որոնել:

— Խնդրեմ նեղութիւն չբաշես, ես ինքս ամեն տեղ էլ որոնել եմ. բացի քեզանից ոչոր չէ մտել այստեղ, ուրեմն պէտք է խոստովանուես, ո՞րտեղ է իմ հինգ ըուրլին:

— Զգիտեմ, խանում, ինչ էք հրամայում, աչքովս էլ չեմ տեսել:

— Փողս քեզ մօտ է, հասկանո՞ւմ ես. դու ես գողացել, պարզ արտասանեց տիկինը անթարթ հայեացքով մօտենալով խոհարարուհուն:

Աննան սկսեց բարձր ձայնով հեկեկալ:

— Ե՛ս, ես, ինչո՞ւ էք ինձ այսպէս վիրաւորում. մի՞թէ ես կարող եմ այդպիսի յանցանք գործել:

— Աննա, ես քեզ նախազգուշացնում եմ, որ կըյայտնեմ ոստիկանատանը, իսկ այնտեղ իրանք գիտեն իրանց անելիքը:

Աղջիկը տիկնոջ ոտներն ընկաւ, սկսեց լաց լինել և աղերսել.

— Խղճացէք ինձ, սիրելի խանութ, հաւատացէք չեմ վերցրել և ոչ տեսել եմ. ո՛հ, մի կորցնէք ինձ:

Աննան ոչ մի բանից այնպէս չէր վախնում, ինչպէս ոստիկանատնից:

— Կորիւր այստեղից, գոռաց տիկինը զայրացած:

— 2ի էլ ուզում խոստովանուել, բարձրաձայն գոռաց Պետրոսը:

Աննային ոստիկանատուն տարան. սկսեցին հարց ու փորձ անել, տանն էլ նրան խուզարկեցին:

— Մեր ցեղում այդպիսի բան չի պատահել. ծնողներս իրանց գերեզմանների մէջ շուռ կը գային, եթէ ես այդպիսի յանցանք գործէի, ասում էր աղջիկը իբրև պատասխան նրանց հարցմունքներին:

Որեւէ ապացոյց չգտան, այդ պատճառով Աննային արձակեցին: Նրա խիղճը հանգիստ էր, որովհետև ինքը արդար էր. թէպէտ այդ ամենը ցաւալի և շատ վիրաւորական էր իւր համար:

Այդ միջոցին տիկինը գտաւ կորցրած հինգ ըուրլին. նա դրքի մէջ էր դրել և մոռացմամբ պահարանում պահել: Նա շատ ամաչեց իւր ա-

րածի համար, բայց այնքան քաջութիւն չունեցաւ այն անմեղ աղջկայ վրայ ունեցած կասկածը յետ վերցնելու:

Այդ էր պակաս, որ ես ստորանամ մի գեղջկունու առաջ. ոչ, ո՛չ: Մեծ դժբախտութիւն չէ», մտածեց նա և վճռեց արձակել խոհարարուհուն:

— Բեզ համար ուրիշ տեղ ճարիր, Աննա. մեզ մօտ մեր հին խոհարարուհին է գալու, սրտեց նա: Բեզ պարտ եմ տասը ըուրլի. չորս ըուրլին դուրս եմ գալու կոտրածդ ամանի և պատռածդ երեսսրբիչի համար. մնացածը ստացիր և Տէր ընդ քեզ:

Աննան ցոյց չտուեց, որ ինքը վիրաւորուած է նրանց անարդար վարմունքից. նա կապեց իւր ունեցած-չունեցածը և մնաս բարով ասելով՝ դուրս եկաւ փողոց:

Ծննդեան տօնը մօտ էր: Փողոցներում աղմուկ և ուրախութիւն էր տիրում: Եղանակը ցուրտ էր. ձիւնապատ փողոցներով սահելով անցնում էին սահնակները: Ժողովուրդը գնած իրերը ձեռներին ուրախ տրամադրութեան մէջ շտապում էր դէպի տուն: Ինչներ ասես, որ ի ցոյց չլինէր դրուած խանութների լուսամուտներում — էլ մրգեղէն, էլ զանազան զարդարանքներ, էլ տօնածառեր:

Աննան թափառում էր փողոցներում. նա

չգիտէր ո՛ր գնար, ինչ անէր: Ու՛մ ասես հարց  
րեց: Վերջապէս նրան խորհուրդ տուին գնալ  
խեղճերի ապաստարանը, ուր մնում էին նրա  
նման գործ փնտրող թշուառները:



Գ.

Աննան մի շաբաթից աւելի մնաց անգործ:  
Նա անց ու դարձ էր անում ահազին փայտէ շի-  
նութեան մէջ, ցրտից դողում և նախանձում այն  
ընկերուհիներին, որոնց յաջողում էր պաշօն  
գտնել: Վերջապէս սրան էլ վարձեցին հիւրանո-  
ցի համար:

Աննայի նոր տանտիկինը մի բարձրահասակ,  
նիհար և գունատ դէմքով կին էր: Նա թէպէտ  
բիշ էր խօսում, բայց շատ էր պահանջում. ցոյց  
տուած բանը պէտք է անպատճառ իւր ուզածի  
պէս լինէր: Նա չէր կուտում, չէր գոռում և առ-  
հասարակ ազախնու հետ բացի «վերցրու, տնր,  
շինիր» բառերից երբէք ուրիշ ոչինչ չէր խօ-  
սում: Իսկ եթէ անբաւական էր լինում, այնպէս  
էր նայում, որ Աննան պատրաստ էր գետինը  
մտնելու:

Հիւրանոցում գործ շատ կար. Աննան մի  
րոպէ հանգստութիւն չունէր. ամբողջ օրը գանձում

1002  
1913



զակի ձայն էր լսում. կենողները զանազան պատուէրներ էին տալիս Աննային. մէկի համար ինքնաեռ պէտք է գցէր, միւսի սենեակը մաքրէր և այսպէս անվերջ գործը շէր պակսում:

Աննան ամենքին հասնում էր: Կենողները երբեմն փող էին ընծայում նրան, այնպէս որ հիմա եթէ պատահում էր, որ բան էր կոտրում, տանտիկնոջն այլևս չէր յայտնում, այլ ուղղակի նորն էր առնում իւր փողով:

Յայտնի բան է, Աննան այստեղ աւելի գոհ էր իւր կեանքից, քան առաջուայ տեղում: Նա Սօֆեա անունով մի ուրիշ աղախնու հետ ծանօթացաւ. երկուսով շուտով բարեկամացան և յաճախ միասին էին շուկայ զնում:

Մի անգամ էլ հետեւեալ խօսակցութիւնն ունեցան.

—Ես երբէք խանումի խօսքի տակը չեմ մնում, պարծենում էր Սօֆեան:

—Ապա ինչպէս է, որ խանումդ բեզ զուրս չի անում, կամ ոստիկանատանը չէ գանգաւում, զարմացած հարցրեց Աննան, և մտաբերելով ոստիկանատունը՝ նա ամբողջ մարմնով սարսուաց:

—Դու զեռ ջահիլ ես, բան չես հասկանում, պատասխանեց Սօֆեան հեղնօրէն. երբ երկար կապրես Թիֆլիսում, այն ժամանակ կիմանաս,

թէ ինչպիսի տեղ է: Այստեղ չի կարելի զիւզի պէս ապրել. դու քո միամտութեամբ կարող ես կորչել:

—Այո, այստեղ ապրելը հեշտ չէ, համաձայնեց Աննան:

—Հէնց այդ է, է. երեւի թէյ ու շաքարը քո փողով ես առնում. մինչդեռ ես մի կոպէկ էլ չեմ ծախսել այդ բաների համար, կամաց սասց Սօֆեան խորամանկ ժպիտով:

—Ո՛հ, այդ յանցանք է, ինչպէս կարելի է, սարսափով արտասանեց Աննան:

—Այ, դու, միամիտ գեղջկուհի: Սակայն այս անգամ երկար խօսեցինք, մնաս բարով:

—Գնաս բարով, Սօֆեա:

Այսպիսի խօսակցութիւններից յետոյ Աննան ամբողջ օրը շփոթուած և խորասուզուած էր լինում մտքերի մէջ. նա մտածում էր, թէ որքան գայթակղութիւններ կան Թիֆլիսում. մտաբերում էր իւր զիւզը և հանգուցեալ մօր խօսքերը:

—Զուշացիր գայթակղութիւնից, աղջիկս, ասում էր յաճախ այն բարի կիներ. ուրիշի սեպհականութեանը ձեռ չտաս, անպատկառ խօսքերով չպղծես բերանդ, փոքր երեխաներին երբէք չվիրաւորես, եթէ մարդիկ քեզ զուր տեղը վատաբանեն, դու լռիր ու հեռացիր. թող Աս-

տւած անէ նրանց դատաստանը և ոչ թէ դու:

Աննան իւր պայծառ աչքերը դարձնում էր դէպի այն անկիւնը, որտեղ պատից կախուած էր մօր տուած փորրիկ պատկերը և շշնջում էր. «հանգիստ եղիր, մայրիկ, ես յիշում եմ քո պատուէրները»:

Այդ տարին ձմեռը սաստիկ ցուրտ էր: Աննան տաք վերարկու չունէր. երբ կենողները նրան ուղարկում էին որևէ բան առնելու, նա զլիսին շալ էր դրում և տաք խոհանոցից շտապով դուրս էր թռչում այն ցրտին:

Մի երեկոյ կենողները գանգը քաշեցին. լսող չեղաւ. երկրորդ, երրորդ անգամ քաշեցին, բայց Աննայի արագ քայլերը դարձեալ չլսուեցին նախասենեակում: Տանտիկինը գայրացած ինքը վազեց խոհանոց:

—Աննա, այս ինչ է նշանակում, դուռաց նա, այսքան կանչում են և դու չես գալիս:

Աննան վախեցած վեր թռաւ տեղից. նրա դէմքը կարմրած էր, աչքերը պղտոր ու բորբոքուած, շրթունքները չորացած. նա կուրծքը սեղմելով հագաց և թուլացած ընկաւ անկողնու վրայ:

—Ի՞նչդ է ցաւում, հարցրեց տիկինը:

—Լաւ չեմ, գլուխս սաստիկ ցաւում է և

ամբողջ մարմնովս կարծես մըջիւններ են վազվզում:

—Ի՞նչ դժբախտութիւն... Հիւանդ ես. ինչո՞ւ առաջ չասացիր. խտրեցիր ինձ. հիմա ես ի՞նչ անեմ առանց աղախնի:

—Շուտ կառողջանամ, խանում:

—Ո՛չ, շնորհակալութիւն. դնա՛ շուտով դրոնապանին կանչիր, որ քեզ հիւանդանոց տանի:

—Ո՛հ, սարսափում եմ, մահու չափ վախեցնում եմ հիւանդանոցից:

—Այդ էլ ի՞նչ նագեր են, ապա այստեղ հօշեմ թողնելու քեզ. կարելի է հիւանդութիւնդ վարակիչ է: Առանց խօսելու գնա՛ դոնապանին կանչիր և փասա-փուսէ՛ղ հաւաքիր:

Դոնապանն եկաւ Աննային տարաւ, բայց ոչ մի հիւանդանոցում չընդունեցին նրան ազատ տեղ չլինելու պատճառով: Խեղճ աղջիկը դողում, հագում էր և կառքի ամեն մի ցնցումից հառաչում: Վերջապէս ամենահեռաւոր հիւանդանոցում նրան ընդունեցին, բայց արդէն ուշաթափ տարան ներս:

Առողջ կազմուացքը և ջահիլութիւնը յաղթող հանդիսացան. Աննան սկսեց առողջանալ: Նա պառկած է մեն-մենակ և տեսնում է, թէ ինչպէս հինգշաբթի ու կիրակի օրերը միւս հիւանդներին տեսնելու են գալիս իրանց ծնողնե-

բը, բոյրներն ու եղբայրները, ինչպէս միքանիսին հոգում, խղճում են, բուլկի ու քաղցրեղէն են բերում. իսկ Աննայի մօտ ոչոք չի գալիս: Նրան թւում է թէ ինքը միայնակ է աշխարհի երեսին և սարսափ է տիրում նրան, երբ մտաբերում է, թէ ինչ է սպասում իրան հիւանդանոցից դուրս գալուց յետոյ:

Վերջապէս Աննային բժշկուած համարելով՝ արձակեցին հիւանդանոցից. այլևս չկար նրա գիրութիւնը, նրա հաստ ծամը, կարմիր թշերը:

Նիհար, գունատ, խորն ընկած աչքերով, կարճ կտրած մազերով, ծանր շունչ քաշելով, իւր կապոցը ձեռին, օրօրուելով անցնում էր փողոցով և շուտ-շուտ կանգ առնում հանգստանալու:

«Ո՛ւր գնամ... նրա մօտ... բոլոր ուրբոց Մօր մօտ. բոլոր վշտացածների պաշտպանուհու մօտ»:

Աղջիկը մտաւ մի փոքր եկեղեցի, իւր վերջին կոպէկներով մի գոյգ մոմ առաւ վառեց և ծնկաչոգ ընկնելով Աստուածածնայ պատկերի առջև՝ սկսեց ջերմաջերմ աղօթել:



գալիցմ մայիկատս զսատ սօն զսօն իտղէր  
-տչոյ մասխտուարունու՝ մայիկատս իտնա  
յ) մանու առջ ամ սաննա՞ ա իմոյն օրն  
դիւրեմա ստանաւարուն շտ ուղում միայնապ  
բտտա մայ իւ մ սաւա բնոյ գիմբրա՞ 66 Մ  
փոք հայն հա միայունմ իտրտա բոյր միայնապ  
դիւրեցաւ մ զկտոց բնմ մայիկոյն զստաւմ

7.

Աղօթքից յետոյ Աննան մի քիչ թեթեւութիւն գրաց, դուրս եկաւ աղմկալից փողոց. գնում է և օրօրում, երբեմն կանգ առնում, երբմն նըստում: Նա սաստիկ թոյլ էր զգում իրան, բայց ուզում էր մի կերպ հասնել գիշերելու ապաստարանը:

Աննան եկեղեցու պարսպին հասնելով՝ նըստեց նրա սանդուխքների վրայ:

Գարնան սկիզբն էր, տաք և հանդարտ եղանակ. արևը սրայծառ լուսաւորում էր, ճընճ-դուկները ծլվում:

Մայթերի վրայով ժողովուրդը անգաղար անց էր կենում. ի միջի այլոց անց կացաւ և մի պառաւ կին երկու փոքրիկ աղջկայ հետ միասին: Պառաւը ցածրահասակ էր, արևոր մազերով, դուրեկան դէմքով և շատ պարզ հագնուած. նրան ուղեկցող աղջիկներից մինը հինգ տարեկան կըլինէր, զանգրահեր, սևաչեայ և բոլորակ

դէմքով. միւսը մօտ տասը տարեկան, երկար ծամով, տարիքին անհամապատասխան լրջութեամբ, սիրելի ու համեստ. նա շատ նման էր պառաւին:

Մեծ աղջիկը կանգ առաւ և մի բան ասաց պառաւին, ցոյց տալով Աննային:

Պառաւը գրպանից հանեց քսակը և աղջկանը փող տուեց:

—Վերցրո՛ւ, ասաց աղջիկը Աննային մօտենալով: Աննան կարմրեց, նա ամաչեց և մինչև անգամ վախեցաւ:

—Ես ողորմութիւն չեմ խնդրում... ո՛չ, ո՛չ... հարկաւոր չէ, օրիորդ:

—Նա չէ ուզում վերցնել, տատիկ, վիրաւորուած ձայնով ասաց աղջիկը իրան մօտեցող պառաւին:

—Դու երևի հիւանդ ես, սիրելիս, հարցրեց պառաւը:

—Այսօր եմ դուրս եկել հիւանդանոցից:

—Ինչո՞վ էիր հիւանդ:

—Բժշկներն ասում էին, որ թորերի բորբորումն էր:

—Խեղճ աղջիկ, երևում է դեռ շատ թոյլ ես... Ինչպէս թողին քեզ հիւանդանոցից:

—Տեղ քիչ կար:

—Անունդ ինչ է:

—Աննա:

—Այստեղ ինչո՞ւ ես նստել, ո՞ր ես գնալու:

—Ես զիւղիցն եմ, այստեղ ոչոք չունեմ, զիշերելու ապաստարանն եմ ուզում գնալ, իսկ այնտեղից մի կերպ պաշտօն կըդառնեմ, գոնէ մի փոր հացի համար... դեռ ոչժ չունեմ, խանութ, թոյլ եմ... Նրանք երկար խօսեցին. պառաւը ամեն բանի մասին հարց ու փորձ արաւ. աղջիկն էլ բոլորը պատմեց պարզ ու անկեղծ:

—Ա՛խ, դու խղճուկ... զիտես ինչ, Աննա, վեր կաց, կամաց-կամաց գնա՛ մեր տուն. այնտեղ կեր ու տաքացիր, իսկ պաշտօնիդ համար յետոյ կըմտածենք:

—Խանութ, սիրելիս, ո՞րքան զթած էք, մինչև մահս չեմ մոռանայ ձեր բարութիւնը: Աննան վեր կացաւ և ուզում էր պառաւի ձեռք համբուրել:

—Ո՛չ, ո՛չ, հարկաւոր չէ. հասցէն լաւ միտոյ պահիր. Միքայէլեան փողոց, Յակովբեանի տուն, բնակարան № 2, չե՛ս մոռանայ:

—2եմ մոռանայ, սիրելիս:

—Գնա՛ կամաց-կամաց, մենք էլ շուտով կը վերադառնանք:

Աննան մի կերպ տեղ հասաւ, երկշտուութեամբ թակեց դուռը և մտաւ մաքուր լուսաւորուած խոհանոցը: Նրան ընդունեց մի պառաւ

կին, որ նոյնպէս խղճաց նրան:

— Ինչպէս նիհար ես, աղջիկ. գարմանալի է ճշմարիտ, որ դեռ կարողանում ես ման գալ:

— Ծանր հիւանդ էի, նանի, նոր եմ վեր կացել:

Աննան պատմեց թէ ինչպէս էր հանդիպել պառաւ խանումին օրիորդների հետ և ինչ խօսակցութիւն էին ունեցել:

— Զատ լաւ են, հագուազիւտ բնաւորութիւն ունեն. պառաւ խանումն ամենքին խղճում է: Եթէ գիւղում դժբախտութիւն չպատահէր, ես կեանքումս չէի բաժանուի սրանցից... Այո, մեր տանը հրդեհ է պատահել, մայրս վախճանուել է, և հայրս մենակ մնալով կանչում է ինձ, պատմում էր գրուցասէր պառաւը:

— Ուրեմն գիւղ ես գնալու, նանի, շատ ցաւում եմ, սասց Աննան:

Զուտով վերադարձաւ պառաւը իւր թոռնիկներին հետ: Երկու աղջիկն էլ իսկոյն խոհանոց վագեցին և Աննային տեսնելով ամօթխածութեամբ ժպտացին: Աննան ոտի կանգնեց և նոյնպէս ժպտաց:

— Ե՛կ, եկ այստեղ, սիրելիս, կանչում էր Աննան փոքրիկին, որ թագնւում էր մեծ քրոջ ետևը:

— Այդպէս լաւ չէ, Վարդուհի, ինչո՞ւ ես

թագնւում, նկատեց մեծ քոյրը:

— Զեր անունն ինչ է, սիրելի օրիորդներ, հարցրեց Աննան:

— Իմ անունս Հեղինէ, իսկ քրոջս-Վարդուհի: Ասացէք, խնդրեմ, հիւանդանոցում շատ վատ էր, հարցրեց մեծ քոյրը աւելի մօտենալով Աննային:

— Ոչ, սիրելի օրիորդ, այնտեղ վատ չէ. խեղճ մարդը ո՞ւր կարող է գնալ: Այնտեղ բժիշկ կայ, զթութեան քոյրեր կան, դեղերն էլ ձրի են տալիս:

— Իսկ իմ տատիկը միշտ մուրաբայի ու թէյի հետ է խմեցնում դեղը ու վերջն էլ կանֆէտ տալիս, խօսեց փոքրիկը: Տատիկս քաղցրեղէնը փոքրիկ կամոզումս է պահում:

— Ա՛խ, դու իմ սիրուն թռչնակ, ծիծաղեց Աննան:

Հէնց այդ միջոցին պառաւը խոհանոց մտաւ:

— Գէ՛հ, ինչպէս ես, Աննա, տաքացա՞ր, կերա՞ր: Թոռնիկներիս հետ էլ ծանօթացել ես. ուրեմն կաց մեզ մօտ մի առ ժամանակ, մեր Մարթային կօզնես մինչև նրա գնալը, իսկ յետոյ կրտեսնենք:

Աննան այնքան զգացուած էր, որ չկարողացաւ խօսել, այլ չոգեց և ուզում էր տիկնոջ ոտքը համբուրել:

— Այդ ինչ ես անում, վեր կաց շուտով, ա-

սաց պառուր. Հեղինէն մօտ վագեց, որ օգնէ վեր կենալու:

—Վեր կացէք, Աննա, վեր կացէք, շնջաց նա:

Աննան վեր կացաւ և արտասուալի աչքով արտասանեց.

—Ծնորհակալ եմ... շնորհակալ եմ ձեր բարեսրտութեան համար... Թող Ամենակարողը Ինքը վարձատրէ ձեզ:

—Դէհ, լաւ, պառկիր, հանգստացիր... գրնանք երեխայք: Հեղինէ, դու դասերդ դեռ չես սովորել:

Երեխաներն ուրախ ժպտով մնաս բարով ասին Աննային և գնացին իրանց սենեակը:

«Թուում է թէ դրախտն եմ ընկել, ինքն իրան մտածում էր Աննան, փոքրիկ աղջիկները կարծես հրեշտակներ լինեն, իսկ խանութը մի սուրբ արարած»: Եւ խեղճ աղջկայ երախտագէտ սիրտը հանգստութիւն զգաց:

—Ուրեմն աշխարհիս վրայ այսպիսի մարդիկ էլ կան եղիլ, զարմացած արտասանեց Աննան:

—Ի՞նչ ասել կուզէ, որ հագուազիւտ մարդիկ են, հաստատեց պառուր խոհարարուհին:



**Ե.**

Արդէն մի տարի է անցել, ինչ որ Աննան իւր նոր պաշտօնումն է: «Ուղղակի դրախտն ընկայ», շատ անգամ ասում էր նա ինքն իրան: Իսկ պառուր խանութին և նրա փոքրիկ թոռներին այնպէս էր սիրում, որ պատրաստ էր կեանքը զոհելու նրանց համար: Եթէ նրանցից մէկն ու մէկը հիւանդ էր լինում, Աննան ամբողջ գիշերներով չէր քնում: Նրանց ամեն մի կոպէկի համար զոգում էր: Նա պատրաստ էր գնալ քաղաքի ամենահեռու տեղից գնել առնելիքները, միայն թէ աւելի լաւ և աւելի էժանը լինէր, և նա մտքովն անգամ չէր անց կացնում, թէ երբեք է կարող է նրանցից բաժանուել:

Նրանց մօտ կեանքն անցնում էր խաղաղ և հանգիստ:

Պատուը բաւական մեծ կենսաթոշակ էր ստանում և մեծացնում էր իւր ուրբ թոռնիկներին, որոնց ծնողները մեռել էին խօլերայից: Տատը ամենքին սիրում էր, ամենքին ներում իրանց պակասութիւնները, ոչոքի չէր պախարակում, այլ անկեղծ սրտով օգնում, սովորեցնում էր չհասկացածները. ամենքի հետ մեղմ ու քաղցր էր վարւում: Փոքրիկ աղջիկները իրանց տատի նման բարի և կարեկցող սիրտ ունէին:

Վարդուհին գեռ փոքր էր և խելառ, սակայն Հեղինէն ամեն բան հասկանում էր: Նա յիշում էր իւր սիրելի հայրիկի ու մայրիկի մահը, որ ծանր հետք էր թողել նրա մանուկ հոգու վրայ:

—Տատի ջան, շատ անգամ ասում էր նա, որքան բախտաւոր եմք, որ քեզ նման լաւ, քեզ պէս բարի տատ ունենք:

—Ես շատ կըրցանկանայի, իմ սիրելիներս, ձեզ մեծացնել, կուզէի ձեզ տեսնել լաւ մարդիկ դարձած, պատասխանում էր տատը:

—Ահա, օրինակ՝ մեր Աննան ոչոք չունի աշխարհիս երեսին:

—Սյրպիսիներին, սիրելիս, պէտք է սովորեցնել, խորհուրդ տալ, խղճալ: Հաւատա՛, գաւազըս, որ հասարակ մարդը շատ լաւ է հասկանում արդարութիւնը և գնահատում բարութիւնը:

Տատը երկար ժամանակ ինքն էր ամեն բան ցոյց տալիս և բացատրում իւր ջահիլ խոհարարուհուն:

—Աննա, սիրելիս, նայիր և սովորիր, թէ ինչպէս պէտք է ամեն բան մարուր շինես: Անշուշտ վերջը շնորհակալ կըլինես և շատ անգամ կըմտաբերես ինձ: Նայիր... Եւ տիկինը վերցնելով մանկական կօշիկը՝ ցոյց էր տալիս թէ ինչպէս պէտք է սրբել. սովորեցնում էր հարթուկել. ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք է եփել այս կամ այն կերակուրը:

Աննային այլևս չէին յանդիմանում, նրա վրայ այլևս չէին գոռում:

Սկզբում նա իրան անյարմար էր զգում. «երանի թէ խանութս ինձ վրայ բարկանար», շատ անգամ մտածում էր նա իրան մեղաւոր զգալով: Այն ինչ խանութը փոխանակ բարկանալու՝ միքանի անգամ ցոյց էր տալիս, կըկնում էր միկնոյնը և ուրիշ կերպ չէր դիմում նրան, բայց եթէ՝ «սիրելի» բառով: Եւ մի տարուց յետոյ Աննային դժուար էր ճանաչել. առաջուայ տղէտ գեղջկուհին այժմ դարձել էր մի ճարպիկ, հասկացող և հաւատարիմ խոհարարուհի:

Աննան կարողանում էր սենեակները կարգին հաւաքել, եփում էր բաւական լաւ, լաւ լուանում ու հարթկում և ամենայն կերպ աշխա-

տում էր իւր սիրելի տէրերին հաճոյանալ: Սիրում էր նրանց իւր անխարդախ, շնորհակալ սրտով:

Ի՞նչ էր Աննան նրանց համար. հասարակ գիւղացի աղջիկ—մի խոհարարուհի:

Սակայն նրա սիրելի փոքրիկ օրիորդները առանց նրան ոչինչ չէին ուտում. վազում էին խոհանոցը և ամեն բանից էլ բաժին տալիս նրան:

—Կեր, Աննա, սա նարինջ է, երևի ձեր գիւղում այսպիսի բան չես կերած, ասում էր Հեղինէն:

—Չնորհակալ եմ, սիրելիս, ինքդ կեր, ես հօ փոքր չեմ:

Եւ երկու քոյրն էլ միշտ բաժանում էին նրա հետ տատից ստացած մրգերը:

Մի անգամ Աննան հիւանդացաւ: Այժմ նրան յայտնի էին բազմաթիւ կանոնները. մտաւ տատի մօտ ու ասաց:

—Խանում, ես գնում եմ դռնապանին կանչելու:

—Ինչո՞ւ, Աննա, ի՞նչ է պատահել. զարմացած հարցրեց պառաւը:

—Տկար եմ, կանչեմ, որ ինձ հիւանդանոց տանէ:

—Ի՞նչ ես ասում, անխելք, գնա՛ պառկիր

խոհանոցում, ես քեզ անական ղեղերով կառողջացնեմ. հանգիստ եղիր, կանցնի. վերջապէս բժիշկ կը կանչենք: Գնա՛ պառկիր, սիրելիս, ես այս բոլորէն կը դամ, միքանի ղեղեր կը բերեմ:

—Ինչպէս կարելի է, խանում, ես ինչ եմ, որ դուք ինձ համար նեղութիւն քաշէք. արժանի եմ արդեօք այդպիսի խնամքի:

—Դու էլ այնպիսի մարդ ես, ինչպէս մենք ամենքս, իսկ դու մեզանից շատ ես աշխատում և յոգնում: Այժմ հիւանդացել ես, ուրեմն հարկաւոր է քեզ բժշկել: Դէ՛հ, գնա՛, պառկիր, աւելորդ մի խօսիր:

«Ուրեմն Աննան, այն գեղջկուհին նոյնպիսի մարդ է, ինչպէս միւսները»:

Խեղճ աղջիկը իւր ամբողջ կեանքում չէր կարող մոռանալ, թէ ինչպէս պառաւ խանումը ինքը իւր ձեռով սառը ջրում թրջած երեսուրբիչ էր զնում նրա գլխին, ինքնաեռ զցում, կերակուր եփում... Իսկ Հեղինէն փոքրիկ սեզանը զնելով հիւանդի մահճակալի մօտ՝ թէյ էր բերում հետն էլ մուրաբայ ու ասում:

—Աննա, հիմա աւելի լաւ ես զգում քեզբայց քինան շատ դառն է, այնպէս չէ: Եւ Հեղինէն խղճալով նայում էր նրա վրայ իւր բարի, մտախոհ աչքերով:

—Չնորհակալ եմ, Հեղինէ՛ ջան, տուր ձեռքդ

համբուրեմ, զգացուած ասում էր հիւանդը:

— Ի՞նչ ես անում, Աննա, հարկաւոր չէ. շուտով առողջացիր, տխուր եմ, որ դու հիւանդ ես: Խմիր թէյդ, ես էլի կրբերեմ:

Գժուար է նկարագրել, թէ որպիսի երախտագիտական խոր զգացմունքով էր լցուած գեղջուկ աղջկայ սիրտը: Նա շարունակ աչքերը գարձնում էր դէպի երկինք և երկար կեանք բարեմաղթում իւր բարի տէրերին: «Աստուած իմ, որքան բարի են, որքան զթառատ», շարունակ շշնջում էր նա:



9.

Աննան սրբեց, մարրեց խոհանոցը, պղնձէ ամանները, որոնք ոսկու պէս փայլում էին, կարգով դարսեց դարակների վրայ, որոնց ափերին կպցրած էր սպիտակ ֆեստոններ: Աննան սիրով իւր շուրջը նայեց. այստեղի ամեն մի շնչին իրը թանգ էր նրա համար:

Բնակարանում տաք էր ու հանդարտ:

Աննան երեկոները սովորաբար կար էր անում, երբեմն էլ երեխաների սպիտակեղէնը կարկատում:

Մի անգամ երկու փոքրիկները ներս վազեցին խոհանոց: Վարդունին փաթաթուեց Աննայի վզովն ու կախ ընկաւ... երևում էր՝ որ նրանք շատ մտերիմ բարեկամներ են:

—Մի պարերդ երգիր, Աննա, խնդրեց երեխան:

—Ոչ, սիրելիս, ժամանակ չունեմ, դեռ ձեր գուլպաները պիտի կարկատեմ:

—Եւ կարիր, և երգիր:

—Էհ, Վարդուհի, դու ուզում ես, որ շարունակ երգեն քեզ համար: Աննա, աւելի լաւ է պատմես ձեր գիւղի մասին. պատմիր ինչպէս սով ընկաւ գիւղում, խնդրեց Հեղինէն:

—Բայց, սիրելիք, չէ որ շատ անգամ եմ պատմել ձեզ այդ մասին:

—Ոչինչ, դարձեալ պատմիր:

—Այո, սիրելիք, Աստուած մեզ փորձանք ուղարկեց: Սովը մի ծանր, սարսափելի դժբախտութիւն է:

Հեղինէն երկու ձեռով յենուել էր խոհանոցի սեղանին և լայն բացած աչքերով հետաքրքրութեամբ նայում էր Աննային:

—Ես չեմ հասկանում, Աննա, չեմ կարողանում երեւկայել, թէ ինչ բան է սովը, ինչ ասել է քաղցած լինել: Երեւի շատ դժուար բան է այդ:

—Գժուար ասիր ու պրծար... անտանելի է:

—Գէհ, պատմիր, Աննա, կամաց խնդրեց Հեղինէն:

—Գարունքից սկսուեց... լսած կըլինես երաշտի մասին:

—Այո, այո:

—Հէնց այդ երաշտութիւնն էր, որ ամեն բան ոչնչացրեց. էլ ոչինչ չբուսաւ դաշտերում: Աշունն եկաւ. գիւղացիք գլուխները կախ գցեցին: Արտերը ոչինչ չտուին. ինչ պիտի ուտէինք: Գիւղացիք իրանց անասունները ծախեցին, այդ փողերն էլ կերան պրծան. իսկ ձմեռը դեռ երկար էր: Երեխաները քաղցից նիհարեցին: Ալիւրի հետ խառնում էին թէփ, սագախոտ, կեղև. բնակիչներից շատերը գանազան երկիրներ դնացին աշխատելու. գիւղերը դատարկուեցին. մարդիկ սառուրի պէս էին ման գալիս... Երեխաները լաց էին լինում, հաց էին պահանջում. ծնողների սիրտը մղկտում էր... Ոչ հաց կար, ոչ փայտ, ոչ շոր: Ամենքի գրութիւնը անել դարձաւ:

Հեղինէն կարծես սառել էր տեղն ու տեղը. նա անշարժ նստած լսում էր. նրա այտերից արտասուքի խոշոր կաթիլներ էին գլորւում: Նա թէև առաջին անգամ չէր, որ լսում էր, բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ սաստիկ տխուր տպաւորութիւն գործեց նրա վրայ այդ պատմութիւնը:

—Տէր Աստուած, գոնէ շուտով գնային, օդ-

նութեան հասնէին սովեալներին, արտասանեց նա անկեղծ ցաւակցութեամբ:

—Աննա, կօզնեն նրանց, այնպէս չէ. հարցրեց Վարդուհին, երկու ձեռով դէպի իրան դարձնելով նրա դէմքը:

—Կօզնեն, հոգիս, ինչպէս չէ. բարի մարդիկ կօզնեն:

—Գիտես ինչ, Աննա, երբ գիւղերում սով կար, տատը մեզ ամեն օր եկեղեցի էր տանում և մենք միշտ փող էինք գցում տուփի մէջ: Իսկ տանը շարունակ կարում էինք թէ նոր շորեր և թէ հիները կարկատում. յետոյ տատը ուր-որ ուղարկում էր այդ բաները. պատմեց Հեղինէն:

—Տեսնո՞ւմ ես, սիրելիս, ահա այդպէս ամենքը օգնում էին զանազան տեղերից. քաղցած մարդկանց չթողին թշուառութեան մէջ:

—Աննա, մենք այդ ժամանակ քաղցրեղէն չէինք ուտում: Տատն ասում էր, թէ «իննը նահանգում սով կայ, յանցանք է, որ մենք աւելորդ ծախսեր անենք»:

—Խանումը բարի հոգի է, նա սուրբ է:

—Իսկ յետոյ, յետոյ, Աննա:

—Յետոյ հիւանդութիւններ սկսուեց... թրւում էր թէ ամենքը պիտի կոտորուեն, բայց ոչ. Աստուած զթաց մեզ վրայ. ուսանող բժիշկներ և ուրիշ պարոններ եկան... Մի տեսակ խա-

նութներ շինեցին ու սկսեցին ժողովրդին ձրի կերակուր բաժանել: Ամենից շատ երեխաների վրայ էին հոգում... Ինչպէս խղճում էին ժողովրդին, լաւ մարդիկ էին. Աստուած նրանց երկար կեանք տայ:

—Իսկ յետոյ, Աննա, ամենքն էլ առողջացան, այնպէս չէ. յետոյ լաւ բերք էլ ունեցա՞ք:

—Առողջացան, բայց ոչ շուտ:

—Գիտես, Աննա, որ մեր ժողովրդին օտար երկիրների ժողովուրդներն էլ օգնում էին. օրինակ՝ ֆրանսիացիք, ամերիկացիք:

—Ժողովուրդի մէջ խօսում էին... Հեռու տեղերից ալիւր էին ուղարկում, միայն թէ մեր ալիւրի համը չունէր:

—Այո, այո, ճիշտ է: Ո՛հ, ինչ ծանր ժամանակ էր, մտախոհ արտասանեց Հեղինէն:

Երեխաները շատ էին սիրում «խոհանոցի այդ ժողովները», ինչպէս կոչում էր տատը: Շատ հետաքրքիր էին նրանց համար այդ խօսակցութիւնները. Տատն և եօթամեայ գիւղացի աղջիկը նոյնչափ միամիտ երեխայ էր, որչափ իւր խօսակիցները:

—Հիմա պատմիր մեզ, Աննա, ինչպէս պատահեցիր արջին:

—Արջ միքանի անգամ եմ տեսել: Մի անգամ ընկերուհիներով գնացինք անտառ պը-

տուգներ հաւարելու: Մեր անտառները շատ մեծ են ու խիտ... այնտեղ ամեն տեսակ պտուղ, հոտաւէտ ծաղիկներ, բարձր սոճիներ և շատ զանազան տեսակ ծառեր կան:

—Ախ, ինչպէս լաւ կը լինի այդպիսի անտառում վազվզել, գոնէ մի անգամ. ընդհատեց Հեղինէն, որ երբէք անտառ տեսած չէր:

—Արդէն բաւական մորի ու երակ հաւարած՝ անտառին կից թփերի միջով վերադառնում էինք տուն: Ուղիղ անտառի մօտ դեղնին էր տալիս ցորենը: Մութն ընկնելու վրայ էր Մեզանից մի աղջիկ անթարթ աչքով նայում էր արտին ու աչքը չէր հեռացնում նրանից. մէկ էլ յանկարծ ձայն տուեց.

—Աղջկերբ, նայեցէք, Թորոսնեց արտը մի շուն է մտել ու ոտնատակ տալիս:

—Երկուսն են, ձայնեց միւս աղջիկը:

—Իսկ այն շունը կանգնեց ետևի թաթերի վրայ և սկսեց ուղիղ դէպի մեզ գալ:

—Ո՛հ, ինչ սարսափելի է, կուշ գալով արտասանեց Վարդուհին:

—Արդէն տեսանք, որ ոչ թէ շուն, այլ ասագին արջ էր. իսկոյն դէս ու դէն ցրուեցինք և որքան մեր ծնկներում ոյժ կար, սկսեցինք վազել:

—Իսկ արջը վախեցաւ:

—Երկուսն էլ մեր աղմուկից վախեցան ու փախան:

—Ես կարծում եմ մեծ ու սարսափելի պիտի լինի արջը, ասաց Վարդուհին:

—Այո, Աստուած ոչ անէ, որ մարդ մենակ հանդիպէ նրան: Չմեռը մի գիւղացու ջարդել էր. խեղճը մեռաւ:

Թէ երեխաները և թէ տատը շատ էին հետաքրքրում գիւղով, և Աննան շատ բան էր պատմում նրանց համար իրանց կեանքից ու սովորութիւններից:

Աննան եղբօր հետ մի հարուստ ընտանիքում էր մեծացել: Երբ հայրը մեռաւ, եղբայրն ամուսնացաւ. հարսը վատ բնաւորութեան տէր լինելով՝ տունը տակն ու վրայ արաւ: Տասը տարեկան հասակից Աննան սկսեց եղբօր երեխաները պահել. բայց շնորհակալութեան փոխարէն հարսից ստանում էր միայն ծեծ ու հայհոյանք: Քանի մայրը կենդանի էր, հոգս էր քաշում նրա մասին, գաղտնի փաղաքշում նրան: Մայրը շատ հանդիստ բնաւորութեան տէր էր, հիւանդոտ և ամենքից քաշուող. իսկ երբ մայրն էլ վախճանուեց, Աննան Թիֆլիս գնաց:

Աննան գիւղում թողեց մի կիսաքանդ խրր-  
ճիթ: Նա միշտ մտաբերում էր եղբոր երեխա-  
ներին և չնայած անցեալ չարքաշ կեանքին՝ սի-  
րում էր դիւրը:

—Երեւի հիմա մեծացել են եղբորս երեխա-  
ները, երանի մէկ տեսնէի նրանց:

—Տատը քեզ թոյլ կըտայ, որ գնաս, ասում  
էին երեխաները:

—Հաւաքածս փողերով խրճիթս կըվերանո-  
րոգեմ, որ երբ ծերանամ, դուրսը չմնամ, այլ  
իմ սեպհական տանն ապրեմ:

Սակայն տատը չէր սիրում, երբ Աննան  
պատմում էր երեխաներին զանազան ոգիների,  
մարդագայլերի, հրէշների ու քաջքերի մասին:  
Աննան տգէտ լինելով՝ չէր հասկանում, որ այդ-  
պիսի բաներ չկան, այլ այդ բոլորը հասարակ  
ժողովրդի երևակայութիւնն է ստեղծել:

—Բայց ինչպէս չհաւատամ, խանում, երբ  
«նա» մի անգամ մեր լուսամուտը ծեծեց:

Աննան վախենում էր «մարդագայլ» բառն  
արտասանել և միշտ «նա» էր ասում:

—Ոչ մի մարդագայլ չկայ աշխարհի երե-  
սին, սիրելի Աննա. մէկը հանաքով բան է ասել,  
միւսներն էլ հաւատացել են ու թուլթակի պէս  
կրկնել:

—Խանում, թէև ինքս չեմ տեսել, բայց

ուրիշները տեսել են:

—Այդ բոլորը հնարուածք է և դու երեխա-  
ներին մի պատմիր այդ տեսակ յիմարութիւններ:

—Օրինակ՝ սկզբում ժողովուրդը այնպէս էր  
կարծում, թէ որոտմունքն էլ չար ոգիներն են  
առաջացնում. իսկ հիմա ամենքս գիտենք, թէ  
ինչից է լինում որոտմունքը, համոզուած յայտ-  
նեց ուսումնարանի փոքրիկ աշակերտունին՝ չե-  
ղինէն:

Աննան կասկածանքով գլուխը թափ էր տա-  
լիս և լուում:

Չատ անգամ էլ մեր ջահիլ, գուարճասէր  
խոհարարունին ուրախ ազմուկ էր գցում խոհա-  
նոցում: Նա երգում ու պարում էր իւր «թան-  
կագին օրիորդների» հետ միասին: Փոքրիկ Վար-  
դունու սիրուն դէմքը կարմրում էր յոգնածու-  
թիւնից, բայց նա չէր ուզում յետ մնալ Աննա-  
յից և դարձեալ շարունակում էր նրա հետ պը-  
տոյտներ անել:





Է.

Աննան մարբել, կարգի էր գցել խոհանոցը  
և նստած՝ մանկական գուլպաներ էր կարկա-  
տում:

Հեղինէն գիրք ու տետրակ ձեռին մտաւ  
խոհանոց մի տեսակ բազմահոգ ու գործունեայ  
մարդու դէմքով:

— Լսիր, Աննա, ասաց նա, ուզո՞ւմ ես քեզ  
գրել-կարդալ սովորեցնեմ: Ուղիղն եմ ասում.  
տատս ասում է, որ այդ շատ լաւ կըլինի, և դու  
վերջը ուրախ կըլինես:

— Է՛հ, ի՞նչ ես ասում, Հեղինէ ջան, ես ի՞նչ  
կարող եմ հասկանալ. ո՛չ, ո՛չ, սիրելիս, այդ գը-  
ծուար կըլինի քեզ համար էլ, ինձ համար էլ:

— Ի՛նչ տեսակ աղջիկ ես, Աննա, ամենակին  
դժուար չէ. եթէ աշխատես, շատ շուտ կըսո-  
վորես:

— Դէհ, սովորեցրո՞ւ, սիրելիս, սովորեցրո՞ւ,  
իմ բարի հրեշտակս:

Հեղինէն մի փոքր ամաչելով տեղաւորուեց  
խոհանոցի սեղանի մօտ և լուրջ դէմք ընդունե-  
լով ասաց.

— Երեսդ խաչակնքիր, Աննա:

Աննան խաչակնքեց երեսը:

Հեղինէն բաց արաւ գիրքը և տառացոյցը  
տալով Աննային ասաց.

— Հիմա սկսենք. այս ա տառն է. կրկնիր:

— Ա, ա, ա, կրկնեց Աննան:

— Այս գրքում գտիր ա տառը... լաւ: Ելի  
գտիր... կեցցես: Իսկ այս ա տառն է. կրկնիր:

Աննան բոլոր ուժով երկարացրեց ս-ը...

— Հիմա գրքում գտիր... շատ լաւ: Տեսնո՞ւմ  
ես ինչպէս շուտ հասկացար: Հիմա ասո՞ւ ա և ա  
միասին ինչպէս կրկարդացուի:

Աննան այդ չկարողացաւ:

— Միասին կըլինի ա:

Աննան երեսը ծածկեց գոգնոցով և սկսեց  
ծիծաղել:

— Սովորելիս չի կարելի ծիծաղել: Մի ծի-  
ծաղիր, Աննա, նկատեց փոքրիկ վարժուհին:

— Ես կարծում էի թէ ճիշտ բան պիտի  
սովորեցնես, Հեղինէ... Իսկ դու հանար ես ա-  
նում. միթէ այդ է ուսումը:

— Աննա, ես կըբարկանամ քեզ վրայ և այլ ևս չեմ սովորեցնի: Դու պարտաւոր ես ինձ լսել: Ձէ որ ես գիտեմ, թէ ինչպէս պէտք է սովորեցնել:

— Լաւ, լաւ, մի բարկանար, միասին կըլինի առ յետոյ ինչ:

Հեղինէն ամեն երեկոյ մտնում էր խոհանոց և Աննայի հետ պարապում:

Այդ ժամերը երբեմն ուրախ, երբեմն տխուր էին անց կենում: Մի-մի անգամ վարժուհին հիանում էր իւր աշակերտունու վրայ:

— Դու խելօք և հասկացող ես, Աննա. ես քեզանից շատ գործ եմ. հիմա բաւական բան գիտես, ասում էր նա ուրախ ժպտալով:

Երբեմն հարկաւոր էր լինում տատի միջամտութիւնը, երբ գալով խոհանոց՝ տեսնում էր թէ վարժուհուն և թէ աշակերտունուն լաց լինելիս:

Փոքրիկ Վարդուհին շուրթաժ նայում էր նրանց վրայ և քիչ էր մտում ինքն էլ լաց լինի:

— Երկուսն էլ լաց են լինում, ասում էր տատին:

— Այսպէս էլ բան կըլինի, ինչքան ասում եմ, բան չի դառնում. ոչինչ չի կարողանում կրկնել... Այսօր քտան անգամ ցոյց եմ տուել, ձեռն էլ բռնեցի և օգնեցի... նայիր, տատիկ, ինչպէս է խժբժել. սրանք իսկի տառերի նման են, հեկեկալով պատմում էր Հեղինէն:

— Ուսումը դժուար է. ձեռս չի կարողանում դժուար տառերը գրել. լաց լինելով արդարանում էր Աննան:

— Է՛, սիրելի վարժուհի, դու շատ քիչ համբերութիւն ունես: Եթէ այդպէս պիտի վրդովուես և լաց լինես, լաւ յառաջադիմութիւն չեն ունենայ քո աշակերտները: Աննայի ձեռք կոշտացել է, նա դժուար է սովորում գրել... պէտք է քեզ դսպես, աղջիկս, և համբերես, մինչև որ նրա ձեռք վարժուի:

— Դէ՛հ, Աննա, սիրելիս, աշխատիր աւելի լաւ գրել ձ տառը: Կամաց գրիր... մեղմութեամբ շարունակում էր Հեղինէն իւր դասը:

Մի անգամ Աննան շուկայից վերադառնալով՝ երեխաներին ասաց.

— Ա՛յ, սիրելիք, այստեղ մի կապիկ են բերել, որ կարծես պառաւ կին լինի. շատ հետաքրքիր է. նրա մասին գրուած է մանրամասն:

— Քեզ ո՞վ ասաց, Աննա, հարցրեց Հեղինէն:

— Ես ինքս կարգացի, ցանկապատին մեծ թուղթ կար կպցրած:

— Տատիկ ջան, տատիկ, որպիսի ուրախութիւն. մեր Աննան արդէն կարողանում է փողոցներում կպցրած յայտարարութիւնները կարգաւորաբար ազգազակով Հեղինէն ներս վազեց տատի մօտ:



Ը.

Աննան երեք տարի ապրեց այդ ընտանիքում ուրախ և բախտաւոր:

Այդ ժամանակամիջոցում նա մի անգամ գիւղ գնաց և այնտեղից նամակ գրեց իւր սիրելիներին:

Հեղինէն չափազանց ուրախ էր, որ իւր առաջին աշակերտունուց նամակ էր ստացել:

— Ի՞նչ լաւ եղաւ, որ նրան զրել սովորեցրի. ինչպէս էլ լաւ է զրել, այնպէս չէ, տատիկ:

Աննան եկաւ գիւղից, նա կարօտով զրկեց ու համբուրեց իւր թանկագին օրիորդներին:

— Ես քեզ անհամբեր սպասում էի, Աննա, փաթաթուելով ասում էր Վարդուհին. շատ տրտուր էի առանց քեզ:

— Աննա, գո՛հ էիր, որ կարողանում էիր զրել:

— Մերոնք զարմանում էին. հինգ վեց նամակ գրեցի ուրիշների համար, ուրախ-ուրախ խօսում էր Աննան:

Հեղինէն անչափ գո՛հ էր:

— Ձեզ համար ընծաներ եմ բերել, չարհամարհէք. հատապտուղ է, թարմ ձու, գիւղի թանայս էլ քաթան է, խանում, ձեզ համար, որովհետեւ դուք իմ աղունակներին լաւ էք պահել:

— Ի՞նչ գիտես, թէ լաւ եմ պահել «քո» աղունակներին, ժպտալով խօսեց տատը, ես սրբանց ծեծում էի, անձաշ թողնում... Դէհ, շնորհակալ եմ, Աննա, ընծաներիդ համար, բայց ի՞նչ հարկաւոր էր այդքան շատ:

Երեխաները համբուրում էին երբեմն տատին, երբեմն նորեկ Աննային: Ամենքն ուրախ էին:

Սակայն մարդու կեանքը միշտ միատեսակ լաւ և ուրախ չի անցնում. վրայ են հասնում և ծանր ու տխուր օրեր: Հարկաւոր է համբերութեամբ տանել ամեն տեսակ վիշտ:

Մեր ծանօթ ընտանիքում մի սարսափելի դժբախտութիւն պատահեց. կարծես կայծակն ընկաւ և ամեն բան տակն ու վրայ արաւ:

Յանկարծակի, անսպասելի կերպով վախճանուեց որբերի տատը և Աննայի բարի խանութը:

Հեղինէն տխուր էր հասակաւորի նման. նա ման էր գալիս իրան կորցրածի պէս. բոլորովին նիհարել ու գունատուել էր, երբեմն ամբողջ օրերով մնում էր լուռ, երբեմն դառը լաց էր լինում: Լաց էր լինում նաև Վարդուհին: Աննայի աչքն էլ մի րոպէ չէր ցամաքում:

Յկան, տեղաւորուեցին պառաւի բնակարանում ինչ-որ հեռաւոր ազգականներ, մարդ ու կին, որոնք դաժան և լուռ բնաւորութիւն ունէին: Նորեկներն սկսեցին տան մէջ կարգ ու կանոն մտցնել իրանց ճաշակի համեմատ. յետոյ սկսեցին աշխատել, որպէսզի երկու աղջկանն էլ որևէ գիշերօթիկ դպրոցում տեղաւորեն:

Աղջիկները բոլորովին սուս էին կացել, որովհետև այդ ազգականներն օտար էին իրանց համար. նրանց առաջին անգամ էին տեսնում: Միայն Աննային էին գաղտնի կերպով իրանց սիրտը բաց անում խեղճ երեխաները:

—Աննա, սիրելիս, հիմա էլ ոչոք չունենք, որ այնպէս մօտ լինի մեզ, ինչպէս մեր տաան էր. ասում էր Հեղինէն և զլուխը դնելով սեղանի վրայ՝ դառը լաց էր լինում:

—Այդպէս մի տանջիր քեզ, սիրելիս. ապա ես, միթէ կարծում ես, թէ երբեիցէ կըթողնեմ ձեզ, արտասուալից աչքերով մխիթարում էր Աննան, շոյում նրա գլուխն ու համբուրում:

յետոյ Վարդուհուն էր գիրկն առնում և պինդ սեղմում իւր կրծքին. փոքրիկը լաց էր լինում և այնպէս արտասուալի աչքերով էլ բուն էր մըտնում նրա գրկում:

—Տատը քեզ շատ էր սիրում, Աննա. նա ինչպէս լաւ էր, ինչպէս բարի էր, իսկ հիմա չկայ այլևս. հեկեկալով խօսում էր Հեղինէն երկու ձեռով բռնելով զլուխը:

—Մի լար, Հեղիկ ջան. եթէ դու քեզ այդքան տանջես, տատն այն աշխարհում շատ անհանգիստ կըլինի... Դու դեռ փոքր ես, դեռ շատ օրեր պիտի տեսնես: Փառք Աստծոյ, քոյր էլ ունես... Ձեր տատը շատ վիշտ էր կրել իւր կեանքում, բայց նա համբերութեամբ տանում էր և ձեզ համար հոգում:

—Այո, այո, այսուհետև այնպէս կըվարուեմ, ինչպէս տատս էր սիրում: Դու ուղիղ ես ասում. Վարդուհին դեռ փոքր է, ես լաւ պիտի պահեմ նրան. տատս կըտեսնէ մեզ երկնքից և կուբախանայ: Ես այլևս լաց չեմ լինի:

—Որբերի պահողն Աստուած է: Ամեն ինչ լաւ կըլինի, բարի մարդկանց կըպատահէք, նըբանք կըխղճան ձեզ, ինչպէս դուք ինձ խղճացիք: Մի լար, հոգիս, պայծառ աշիկներդ մի փչացնիր:

Այդպէս մխիթարում էր Աննան իւր թանկազին օրիորդներին:

Հասաւ այն օրը, երբ ազգականները բոլոր պատրաստութիւնը տեսնելով՝ Հեղինէին ու Վարդուհուն պէտք է ինստիտուտ ուղարկէին:

Ճատ ծանր էր նրանց համար բաժանուել Աննայից, թողնել իրանց սիրելի բնակարանը, որտեղ այնպէս լաւ, այնպէս բախտաւոր էին ապրել: Հեղինէն ընկնելով Աննայի վզովը՝ կարծես մարեց նրա գրկում:

—Եկ, շուտ-շուտ այցելիր մեզ, չմոռանաս. շնջում էր նրան համբուրելով:

—Այդ ինքս գիտեմ, հարկաւոր չէ ասել, շփոթուած կրկնում էր նա և նորից գրկում ու համբուրում երեխաներին:

Վարդուհուն հազիւ կարողացան նրանից բաժանել:

Հեղինէին ու Վարդուհուն տարան ինստիտուտ:

Աննան իւր համար նոր պաշտօն գտաւ: Նա սկզբում կարծես երազում լինէր: Նրա խելքն ու միտքը այն դպրոցումն էր, իւր թանկագին օբիեկտները մօտ: Նա շատ անբուն գիշերներ անց կացրեց, մտաբերելով իւր անցած լաւ կեանքը: Նա ջերմ ազօթում էր Հեղինէի ու Վարդուհու համար, մտաբերում էր և հանգուցեալ բարի խանութին:



Թ.

Ժամանակն արագ անցնում էր: Օրերը փոխարինում էին ժամերին, շաբաթները—օրերին, ամիսները-շաբաթներին, և այդպէս տարիները տարիների ետեից:

Ամբողջ չորս տարի էր անցել տատի մեռնելուց: Հեղինէն ու Վարդուհին մի կերպ հաշտուել էին իրանց վշտի հետ և ընտելացել ինստիտուտի կեանքին: Այդ ժամանակամիջոցում Աննան երկու տեղ էր փոխել: Նա միշտ շնորհակալութեամբ էր մտաբերում պառաւ խանութին, որ իրան մարդ էր դարձրել:

Աննան շատ լաւ խոհարարուհի էր համարուում. նա բաւական մեծ ուժիկ էր ստանում, բայց և այնպէս իւր խրճիթը նորոգելու համար դեռևս չէր կարողացել փող յետ գցել:

«Ապա ո՞ր են զնում փողերս, ուղղակի չեմ հասկանում, ինքն իրան մտմտում էր Աննան:

է՛հ, գլուխը քարը, միևնոյն է, նոր հօ չեմ հարստանալու»:

Աննան ապրում էր մի մեծ, շքեղ և ընտիր խոհանոցում: Երբ գործը վերջացրեց, թէյ ածեց իւր համար և հէնց այն է՛ պատրաստում էր, որ նստի խմէ, մի նամակ բերին նրան:

Վրայ ընկաւ, թուցրեց նամակը և սկսեց կարդալ: Հեղինէի դասերը գուր չէին անցել: Աննան սկսեց կարդալ ծանր և լսելի ձայնով:

«Իմ սիրելի և թանկագին Աննա. վաղուց է չես եղել մեզ մօտ. կիրակի օրը սպասում էինք քեզ, ես մինչև անգամ լաց եղայ, որ դու չեկար: Ծատ ենք կարօտել քեզ, սիրելիս: Եկ, էլ չուշանաս և խնդրեմ ինձ համար բերես վարդագոյն ժապաւէն և նամակների վրայ կպցնելու պատկերներ, որոնք անպատճառ հրեշտակներ լինեն: Հն, նոյնպէս օճառ, երկու հատ քաղաքային փոստային մարկայ և տասը կոպէկ, որ ինձ շատ հարկաւոր է: Հեղինէն քեզ համբուրում է. նա վազը կըզքէ քեզ, հիմա դասերով է զբաղուած: Ես այսօր աշխարհագրութիւնից չորս ստացայ, իսկ ֆրանսերէնից հինգ:

Համբուրում եմ քեզ միլիօն անգամ:

Քեզ միշտ սիրող՝ Վարդուհի:

Աննան բախտաւոր ժպիտն երեսին՝ կրկին

ու կրկին կարդաց նամակը և մտածմունքի մէջ ընկաւ. «նա խնդրում է վարդագոյն ժապաւէն և չի գրում ինչ լայնութեան կամ բանի արշին»:

Աննայի համար մեծ բաւականութիւն էր իւր սիրելիների խնդիրը կատարելը: Նա դեռ ինքն էր մի լաւ մտածում, ապա ուրիշներից էլ էր խորհուրդ հարցնում և ամեն կերպ աշխատում էր, որ իւր արածը նրանց սրտովը լինի:

Կիրակի է, ընդունելութեան օրը. ինստիտուտի անաղին դահլիճը լիքն է ժողովրդով. աշակերտուհիները ուրախ հանդիպում են իրանց ծնողներին: Վարժուհիներն անց ու դարձ են անում և հսկում կարգապահութեան վրայ:

Անհամարձակ քայլերով դահլիճ մտաւ Աննան, որ թէև հասարակ, բայց մաքուր էր հագնուած, իսկ գլխին մետաքսէ աղուխ էր կապել: Նա օրապահ վարժուհուն դիմելով՝ խնդրեց կանչել Հեղինէին ու Վարդուհուն, իսկ ինքը նստեց մի հեռաւոր անկիւնում: Միքանի լսելից յետոյ նրանք սիրով զրկում և համբուրում էին միմեանց:

—Աննա, սիրելիս, վերջապէս եկար. այնպէս անհամբեր սպասում էինք քեզ, որ ասել չեմ կարող, խօսեց Հեղինէն:

—Եթէ դու էլի չգայիր, ես դարձեալ լաց կըլինէի, յայտնեց փոքրիկը:

Երկունս էլ շատ էին փոխուել. Հեղինէն արդէն մեծացել էր, շուտով աւարտելու էր դըպրոցը: Նա առաջուայ նման էլի նիհար էր, հեզ և մտածկոտ դէմքով, իսկ Վարդունին զիրացել էր և մի ուրախ ու գանգրահեր աղջիկ էր դարձել:

Այնուհետև Աննան համարեա ամեն կիրակի գնում էր իւր սիրելիների մօտ և նրանց ուրախացնում ինչով որ կարող էր: Նրանք երեքով միասին միշտ խորհրդակցում էին, թէ ինչպէս անեն, որ դարձեալ միասին ապրեն: Չէ որ կեանքի մէջ ամեն բան հնարաւոր է:



3509



ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է՛

«Կենդրոնական», «Կովկասեան» և «Գուտ-  
տենբերգ զրավաճառանոցներում»:

ԲԱԳԻՈՒՄ՝

«Սատրուզնիկ» և «Պրոմետէոս» զրա-  
վաճառանոցներում:

891.715

Լ-90